

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ Ե Խ Ե Կ Ո Ւ Ո Ո Ո Ո Ն Ե Բ Ք Ե

Ճարտ. Ան. ԱՆԴՐԵԱ. ԱՇՈԽ

Չ Ա Խ Բ Ը
ՅԵՎ. ՆՐԱ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ԳԵՂԱՔԱՑ

1932

ԵՐԵՎԱՆ

„ՏԵԽՆԻԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԴՈՒՅՈՒՆ 2010

Հայր. Մի. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

551.49

Ա-57

Զ Ա Ւ Բ Ը
ՅԵՎ ՆՐԱ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եկանի

Եկուան

Սարկոսան

Սարկոսան

ԳԵՂԱՔԻՑ

1932

ՅԵՐԵՎԱՆ

ՀՀ 22, Առև.

19061

11.02.2013

Անհետի ապահովացություն
Ցլավլիք Ա 6986 (Բ)
Հրատար. Ա 1938
Գոտվեր Ա 6226
Տեղայ 5000

ԶՈՒՄԸ ՅԵՎ. ՆՐԱ. ՀԱՇԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կյանքի անհրաժեշտ պայմաններից մեկը ջուրն է. առանց ջրի վոչ մեկ կենդանի, վոչ մեկ բույս չեն կարող առաջանալ, զարգանալ և այսպահնել իրենց բոյությունները: Յերկրագնդի մակերեսի այն մասերը, վոր զուրկ են ջրից՝ չոր, անհրապույր անապատներ են: Մարդ կարող է մինչև քառասուն որ ապրել առանց կերածուր բնութանելու, բայց առանց ջրի՝ մեջ չաքաթ ել չի կարող ապրել:

Ջրի քանակությունը յերկրագնդի վրա ահադին է, նրա մակերեսի յերկու յերրորդական մասը ծածկված է ովկինուսներով, ծովերով, լճերով: Յերկրագնդը ընդապուռող մթնոլորտար ահադին քանակությամբ ջրի զուրութիւն յի պարունակում: Նրա ամեն մի խորանորդ մետրը ծնիրիսուի 40 մերմաստիճանում կարող է մինչև 51 դրամ ջրի զոլորչի պարունակել, սակայն առաստարկ պարունակում ե 20—30 դրամ: յերբ 20 դրամից զարդարած է լինում զոլորչու քանակը ողի մեջ բարեխառնության 40 առողջանում (բայց ներկայութիւն 32 տոտին), զգացի յի լինում արդեն, վոր ողը չոր է, իսկ յերբ 40 դրամից ավելի յի լինում, ողն արդեն խննամ է համարվում և այդ դրում ե մարդու որդանիքմը: Ավելի սուր յերմաստիճաններում մթնոլորտը պահաս դուրս չի լինում պարունակում, իսկ ամենի բարձր յերմաստիճաններում՝ ավելի շատ:

Վորաց պայմաններում դոլորշին խոսնալով՝ իբրև անձրեւ, ձյուն, կարկառ, ցող ու յեղյամ իշնում ե գետնի վրա: Խրեւ պինդ մարմին՝ սառույց, նա ծածկում է յերկրագնդի բնելուային մասերը, բարձր լինութիւնի զագաթները, իսկ ձմեռը՝ համապատասխան կի-

20371-59

սաղնդի մեծ ժամաւը (յերբ կիսադնդերից մեկում ճմեռ և լինում), մյուսում ամառ և լինում):

Հողի մեջից բույսերն ու ծառերն իրենց արմատներով ծծում են ջուրը, այդ պատճառով միշտ մեծ քանակությամբ ջուր են սլարունակում (40—80 %):

Բնության մեջ ջուրը մշտական շրջանառության մեջ և գտնվում. գորշշինանալով՝ նա կրկնն թափալում և յերկրի վրա իրեն անձրև, ձյուն և այլն: Կրկին այստեղ հավաքվում՝ առվակներ, գետեր և կաղմում, վորոնք կրկին յետ են տանում ջուրը դեպի ծովերը և ովկիանություրը: Յեկ այսպես՝ ջուրը դանուում և անզարդում շրջանառության մեջ:

Ոմելու, կերակրի մեջ գործածելու համար մարդիկ ամեն մի չըից չեն ոգտվում, վորովհետև կան դառնահամ, աղի, պղտոր և մերժապես վատառողջ ջրեր: Շատ անդամ ջրի այդ հատկություններն այնքան ակընթախի են, վոր ամեն մարդ զգուշանում և տվյալ ջուրը խմելուց, վորովհետև արդեն նրա դույնից, Համից, Հոտից պարզ և լինում, վոր դա խմելու ջուր չի: Սակայն յերեմն ջրի բացասական հատկություններն ակներեւ չեն լինում, թեպետ ջուրն ինքնըստինքայն վոչ միայն վատառողջ ե, այլ նույնիսկ այն աստիճան վնասակար ե, վոր անթույլատրելի յե նրա գործածությունը:

Բանը նրանումն ե, վոր բացի զանադան խառնուրդներից և ջրի մեջ լուծված աղերից, համարյա միշտ ջրի մեջ ներկա յեն բաղմաթիվ շատ մանր կենդանի կամ բուսական և յակներ, վոր անտեսանելի յեն չղինված ոչքի համար, սակայն տեսանելի յեն դառնում, յերբ վոր ջրի կաթիւը զննվում և մանրադիտակով (միկրոսկոպ):

Մանրադիտակը՝ միքանի հարյուր անգամ մեծագնելով այդ և յակների տեսքը, ցույց ե տալիս, վոր նրանք բոլորն ել իրար նման չեն, այլ բազմազան տեսք ունեն:

Մանրեների ուսումնասիրությունով պարագող պահակերթիւններաւ անվանված դիտությունը մինչև որս

հայտնաբերել, ուսումնասիրել և նկարագրել ե յերեք չորս հարյուր հազար մանրեների տեսակներ, տարրեր «ցիղեր», զորոնց մի մասը կենդանական հարստության և պատկանում, մյուս մասը՝ բուսական հարստության և յերրորդ մասը՝ այս և այն հարստությունների սկզբնական սաղմը հանդիսացող ամենապարզ եյակների թվին: Այդ ամենապարզ եյակներիցն ե սկզբը առել կյանքը յերկրագնուի վրա: Վերջիններս «պոտիստ» անունն են կրում, վոր իր հերթին բազմաթիվ տեսակների յե բաժանվում:

Այդ բազմազան մանրեներից շատերն անվնաս են մարդու առողջության համար, շատերն ել, բնդհակառակը, այսպիսի ծանր հիվանդություններ են առաջնում, ինչպես արյունախառն փորուծություն (գիւղեաների) վորովայնային տիֆ, խոլերա և այլն: Հետեւ վասիս անհրաժեշտ և միջոցներ ձեռք առնել, վոր խմելու չուրը զերծ լինի այդ վերջին տեսակի վնասակար մանրեներից, վորոնք վոչ միայն հիվանդացնում են խմողին, այլ շատ անդամ նույնիսկ մահվան պատճառ են հանդիսանում:

Ոմելու ջուրը պիտի լինի՝

ա) Զանազան աղերից զերծ, կամ պիտի պարունակի նրանց չնչին քանակությունը:

բ) Թափանցիկ և անզույն:

գ) Անհոտ:

դ) Անուշահամ:

է) Կակուղ, վորովհետև ջրին կոշտություն հազարովը կրի ու մաղնեղիսմի աղերն են, վորոնց ներկայությունը ջրի մեջ «կտրում ե» սապոնը, գրկելով նրան ջուրը գրփրացնելու հատկությունից: Բացի այդ, կոչտ ջրում յեփելիս՝ միսը, ընդեղեններն ու բանջառեղենները չեն փափկում, կամ գժվարությամբ են փափկում:

զ) Վարակիչ մանրեներից զերծ պիտի լինի ջուրը:

է) Ջուրը պիտի լինի առատ, իսկ նրա գործադրու-

թյան վայր հասցնելը պիտի կտղված Ախնի առանձին զժվարությունների հետ:

Այսելու և առհասարակ մնացի համար գործ և ածվում ա) զետերի, բ) լճերի և դ) ստորերկրյա աղբյուրների ջուրը: Հաղվաղեալ հանդամանքներում՝ թուրած ջուր, յերբ հիշված յերեք տեսակի ջրերն անմատչի յնն, ինչպես այլ տեղի ուներ Բաղվում՝ մինչև Շոլլարի ջրանցքի կառուցումը:

Գետերի ջուրն առաջանում և մասամբ յերկրի յերեսով վաղող ջրերից, վոր դոյանում են անձրևների և ձյունի համան հետեամբով, և մասամբ՝ ստորերկրյա աղբյուրների ջրերից: Գետի ջուրը համարյա միշտ կակուկ և լինում, այդ պատճառով սովորաբար մեծ քաղաքների ջրանցքների համար նրանցից են ուղտվում: Մակայն գետերը մի անհարմարություն ունեն. նրանց ջուրը զերծ չե կեղտոտմելու վտանգից: Գետերի մոտ զետեղված քաղաքները, գյուղերը և գործարանները անդադար կեղտոտում են նրանց ջրերը: Կեղտոտում են գետերի ջրերը թե անտառներն իրենց արտաթորություններով, թե մարդկի՝ բլացք անելով, բողանարով և այլն: Ենթամն ջրի կեղտոտությունն այն աստիճանի յե հասնում, վոր դետի մկները կոտորվում են, ել առջելի վշացնելով ջուրը: Դարնանը՝ դետերը գուրս գալով իրենց ամիերից, լվանում են մոտակա հողերի կեղտոտությունները և հարստանում հողով, զանազան աղերով և այլն...+

Հետեամբս խմելու ու մնացի համար գետի ջրից կարող են ողտվել միայն մեծ քաղաքները, վորոնք հնարավորություն ունեն մեծ գումարներ ծախսելու և կանոնավոր ջրանցքներ կառուցելու, դետի ջուրը նախորոք մաքրման յենթարկելով: Փոքր քաղաքները և գյուղերը գետի ջրով կարող են ողտվել միայն իրենց անտեսական կարիքների համար, իսկ խմելու և առհասարակ մնացի համար պիտի ամելի մաքուր բնական աղբյուրներ լինուն:

Աների և ավագանների ջուրը հավաքվում և անձ-

րեներից, հալող ձյունից, մոտակա աղբյուրներից, առվակներից ու զետերից: Այսուղ ջրի հատկությունը կախված է ավաղանի մեծությունից ու խորությունից: Մեծ ու խոր ավաղանի ջուրն ամելի լավ է, քան թե փոքր ու ծանծաղ ավաղանինը: Յեթե լճից ջուրն անգատար դուրս և հոսում, ինչպես, որինակ, Սևանա լճից դուրս և հոսում Հրազդանը (Զանգուհ), այդ լճի ջուրն ամելի լավ է, քան թե այն լճերինը, վորոնց ջուրը դուրս չի գնում: Լճի ափերի մոտ զտնված քաղաքները և գյուղերն անխուսափելիորեն փշացնում են նրա ջրի հատկությունը.

Սուրերկրյա ջուրը գտնվում և գետնի զանազան շերտերում, զանազան խորություններում: Ջրակիր շերտերն իրարից բաժանված են լինում անթափանցելի շերտերով, վորոնց միջով ջուրը չի անցնում: Եւրբեմն այդ շերտերից մեկի ջուրն ինքնահօսաբար, կամ արժեառական կերպով գուրս և գալիս յերկրի մակերեսը՝ իրեւ աղբյուր: Ենթամն եւ հոր են փորում այդ ջրին համեմատակով: Գետնի մակերեսին մօտ շերտի ջուրն առհասարակ չի կարող լավ ջուր լինել, վորով հետեւ մակերեսի կեղտոտությունները՝ զետնի վրացից թափանցելով մինչև մոտակա ջրային շերտը հեղուսուում ու վարակում են նրա ջուրը:

Խորհրդային Հայաստանում նույնիսկ քաղաքները կոյուղներից (կանալիղացիայից) զուրկ լինելով, իրենց կեղտոտությունները՝ լիմանի ջրերը, մեզը, կղկղանքը թափում են հորերի մեջ, վորտեղից նրանք անցնում են մոտակա ստորերկրյա ջրային շերտը և վարակում են նրա ջուրը: Վորքան շատ այդպիսի հոր կա տվյալ շրջանում, այսինքն՝ վորքան ամելի խոր և ովյալ շրջանի աղքաղինակությունը, այնքան ամելի վտանգավոր և այդ շրջանի հորերի և աղբյուրների ջուրը, վոր հաճախ աղբյուր և գառնում, համարյա կեղանդությունների տարածման, ինչպես, որինակ, արյունաբան փորահարինքի, վորովայնային տիֆի, խորերոյի և այլն.

իսկ յեթե ջուրն ավելի խոր չերտերից ե գալիք,
և չի կարող կեղառոված լինել, վորովհետեւ անմաք-
բությունները զետնի յերեսից չեն հասնում նրան : Այդո-
պիսի ժաքուր ջրերի թվին և սկատկանում Յերեան քա-
ղաքի ջրանցքի ջուրը :

Սակայն յերեմն այդ խոր չերտերի ջուրն ուրիշ
պակասություն և ունենում : յերեմն նաև պարունակում
է յերկաթի, կրի կամ ուրիշ նյութերի այնպիսի քանա-
կություն, փոր ջրին հաղորդում են անախորժ համ կամ
հստ կամ կոշտություն, վորոնցից զերծ և Յերեանի
ջրանցքի ջուրը :

Հանքային ջուր են կոչվում այն ստորերկրյա ջրե-
րը, վորոնց մի լիտրը մեկ գրամից ավելի զանազան
հանքային նյութեր և պարունակում, թեպետ կյանքում
յերեմն հանքային անունն են կրում և ավելի պակաս
հանքային նյութեր պարունակող ջրերը, յեթե նրանք՝
չնորհիվ իրենց բօւժական հատկությունների, ուստիս-
ակտիվության, պարունակած զաղերի, մարդկային որ-
գանիքի վրա բարերար ազդեցություն ունեն :

Հանքային ջրերը լինում են սովորական բարեխառա-
նության ջրեր և տաք ջրեր : Թիֆլիսի բազնիսների ջու-
րը տաք հանքային ջուր ե, վոր ծծմբաջրածին և պա-
րունակում : Այդ գաղի ներկայությունն արտահայտ-
վում և նրա հստով, վոր նեխված ձվի հստ ե :

Իմպերիալիստական պատերազմից առաջ Հյուսի-
սային Կովկասի հանքային ջրերն արտահանվում ելին՝
1909 թվին մոտ 8 միլիոն շիչ, 1913 թվին արգեն մոտ
18 միլիոն շիչ : 1925 թվին խորհրդային իշխանության
որոք արտահանությունը կրկին հասավ մոտ 18 միլիո-
նի, իսկ այնուհետեւ տարեցտարի ավելանում եւ:
1927-ին արգեն 22 միլիոնի յեր հասել :

Ե. Հայաստանի հանքային ջրերից առայժմ չահա-
պործվում են Արգնու Ջրերը, վորոնեղ բազմաթիվ հի-
վանդներ ամառը լողանք ևն ընդունում որտի հիվան-
դությունների և հսկացառի գեմ : Այժմ այսակ հասուլ
զործարան և կառուցվում Արգնու Ջրերը Հերով արտա-
դարձարան

հանելու նպատակով, վոր մինչև որո կատարվում ե շառ
անշան քանակությամբ :

Կովկասը և նրա մասը կազմող կայսերական հա-
րուստ են բազմազան հանքային ջրերով, վորոնցից այս-
տեղ հիշատակության արժանի յե կայաստանի
Սուլխոյ-Փանտանի ջրջանում գտնված «Կենսալի» աղ-
բյուրը : Այդ հանքային ջրերը զեւ սպասում են ուսում-
նասիրության և ոգտագործման :

Արվեստական հանքային ջրերն աշխատում են նմու-
նեցնել բնական հանքային ջրերին : Գլխավորապես աշ-
խատում են ջուրը հաղեցնել ածխաթթու զաղով : Ան-
հրամեցու ե, վոր այդ նպատակով գործածվող ջուրը
մաքուր և լավ ջուր լինի, հատկապես նա պիտի զերծ
լինի մանրեներից :

Իհարկե, արվեստական ջուրը յերեք չի կարող վո-
խարինել բնականը, վորովհետեւ բանը միայն քիմիական
բովանդակությանը նմանեցնելու մեջ չի . շատ անդամ
բուժական ներգործությունը հետևանք և յրի ու-
ղիականիվության, վորից միշտ զուրկ են արվեստական
Ջրերը :

Արդյունաբերության մեջ ջուրը յերկու ուղղու-
թյամբ և դործածվում . ա) շողեկաթսաներ սնելու հա-
մար և բ) զուտ այս և այն արտադրության նպատակով :
Շողեկաթսաները սնող ջուրը պիտի կակռող ջուր լինի,
վորովհետեւ կոչտ ջրից կաթսան ներսից ծածկվում և
զանազան կրային և մաղնիստական աղերի շերտով, վոր
նվազեցնում և կաթսայի ջերմահաղորդությունը : Դրա
հետևանքով ավելորդ փառելիք և սպառվում, իսկ յերբ
ոյլ շերտը պատահարար ճեղքվում ե, չիկացած կաթ-
սան բովելուրար այնքան չատ չողի յե առաջարնում,
վոր յերեմն կաթսան պայմում ե, պատճառ զառնալով
նյութական վնասների և մարդկային զոհերի :

Արտադրական պրոցեսներում գործադրվող ջուրն
առհասարակ պիտի աղատ լինի յերկաթից և որդանա-
կուն նյութերից : Հատկապես սննդանյութերի արտա-
դարձարան մեջ ջուրը պիտի լինի կակռող և որդանա-

կամ նյութերից ու ժանրեներից աղաս : Այսպիսի արտադրությունների թվին են պատկանում արվեստական ջրերը, գարեջուրը, քաշախը, խմորեղենները և այլն : Բնակչության մեկ հոգու վրա ընկնող ջրի սպառման միջին քանական վայրելում : Ջրանցքներ կառուցելու ամերիկյան քաղաքներում ամեն մի հոգու համար հաշվում են որպական հազար լիտր ջուր, մոտավորապես 83 դույլ, յեվրոպական քաղաքներում՝ 200 լիտր կամ 17 դույլ, մեր Միության քաղաքներում՝ 150 լիտր կամ 12,5 դույլ : Երեսնում մինչեւ սույն 1931 թվի ողոսուոս ամիսը՝ ամեն մի հոգուն ընկնում եր որպական 18 լիտր կամ 1,5 դույլ : այդ դույլ ընկնում են յերկու անդամ ավելի, մոտ 35 լիտր կամ 8 դույլ :

Հաս ոլլանի 1931 թվի վերջին ջրանցքի ջրի քանակը պիտի կրկնապատկվի : Այդ զեպքում Յերեսնի բնակչության ամեն մի հոգուն հՀամանի մոտ 60-70 լիտր, կամ մոտ 6 դույլ : Քանի գեր Յերեսնը կոլուզի չունի, այդ քամակը վորոշ չափով կարող ե բավարարել, վորոշենելու զուտ տնտեսական կարիքների համար բնակչությունն ողտում ե համարյա բացառապես առուների լրերով : 1932 թվին, յերբ ջրանցքն սկսի տալ որպական 42 միլիոն լիտր ջուր, Յերեսնի բնակչության ամեն մի անձին կը նկնի արդեն մոտ 400 լիտր, վոր նույնիսկ յելտապական քաղաքների նորմայից 2 անգամ ավելի յետում:

Զրի Փիզիկական հատկությունները : Մենք այստեղ կանգ չենք առնի քիմիական տեսակետից կատարելազգես մաքուր ջրի վրա, վորովհետեւ կենցաղում այդպիսի ջուր չկա, նույնիսկ թորման միջոցով ստացված ջուր (զիստիլած) պարունակում ե չնչին քանակությամբ, թե պինդ մարմինների հետքեր և թե գաղեր : Գիտնաբեր հատուկ նախաղղուշություններ ձեռք առնելով կանները հատուկ նախաղղուշություններ ձեռք առնելով կանները նյութերի պատրաստում : Մենք խսուելու յենք նարատ ջուր են պատրաստում : Մենք խսուելու յենք նարատ ջուր մաքուր ջրի հասին, վոր պարունակում ե չնչին քանակությամբ աղեր և գաղեր :

Մաքուր ջուրը տաքացնելիս աստիճանաբար ընդարձակվում է, և յերբ նրա բարեխառնությունը հասնում է ծերափուսի 100 աստիճանին, նա սկսում է յեռալ : Սակայն այդ ջերմաստիճանում նա յեռում է, յեթե մթնոլորտի ճնշումը սովորական է, այսինքն՝ մնդիկի ծանրաչափի (բարոմետր) բարձրությունը 780 միլիմետր է : Մինչդեռ ծանրաչափին այդ ճնշումը ցույց է տալիս միայն ովկիանոսի մակերեսի բարձրության վրա գտնվող վայրերում, իսկ ավելի բարձր տեղերում, վօրանող մթնոլորտի ճնշումը պակաս է, ջուրը յեռում է ավելի սառը ջերմաստիճաններում : Որինակ, յեթև վերցնենք Յերեսնը, վոր ովկիանոսի մակերեսից մոտ հազար մետր բարձր է, այստեղ ծանրաչափը ցույց է տալու մոտ 695 միլիմետր, և ջուրը յեռում է արդեն մոտ 96 աստիճան բարեխառնությունում : Մեանում, վորի բարձրությունը 1925 մետր է (լիճը), ջուրը յեռում է մոտ 93 աստիճանում : Մասիսի գազաթին՝ ավելի եւ սառը ջերմաստիճանում : Այդ և պատճառոր, վոր ցած վայրերում, ինչնիս, որինակ, բազվում և բաթումում, բանջարեղիններն ավելի չուտ են փափկում յեռացող ջուրմ, քան թե բարձր վայրերում, ինչպես Յերեսնում, նամանավանդ Մեանում, պայմանով, վոր ջուրը նույն կոշառությունն ունենա, և վոր թե Յերեսնում վերցնենք մեր ծայրահեղ կակուղ ջուրը, իսկ բազվում նրանց կոչտ ջուրը : Այդ միենանոյն պատճառով թեյն ավելի լավ դույն է տալիս ցած տեղերում և թույլ և յինում բարձր տեղերում :

Վերն ասացինք, թե ջուրն ընդարձակվում է տաքանալիս, հետեւապես սեղմվում է, յերբ նրա բարեխառնությունը նվազում է, սակայն դա ճիշտ է՝ սկսած բարեխառնության 4 աստիճանից վերը : Այդ ջերմաստիճանից ավելի սառելիս՝ ջուրը կրկին ընդարձակվում է : 3 աստիճանում ջուրն ավելի ընդարձակ տեղ և բրանում, քան թե ջրի միենանոյն քանակությունը 4 աստիճանում, 2 աստիճանում ևս ավելի, և այնպես մինչև 0 աստիճանը : Այդ աստիճանին հանելուց հետո ջուրը սառում, պինդ մարմին և դառնում :

Հըի այդ ասարութինակ հատկությունը, վոր նա 0-ից մինչ 4 աստիճան հասնեն աստիճանաբար սեղմփում են, իսկ 4-ից մինչև 100-ը՝ աստիճանաբար ընդարձակվում, մեծ գեր և կատարում բնության տնտեսության մեջ։ Ենք մտանում և ձմեռը՝ ավազանների, գետերի, լճերի, ծալերի ջաւրն սկսում և մակերսեսից աստիճանաբար պաղել, և քանի վոր սառը ջուրն ավելի սեղմ են, հետեւ վաղիս ամփելի ծանր են, նաև իջնում և հատակը, իսկ նրա տեղը բնում և ներքնից վեր բարձրացած ավելի տաք, հետեւապես ավելի թեթև ջուրը, վոր իր հերթին ուղղում են և այդպես շարունակ, մինչև վոր ամրող ավազանի, ընի և այլ բարեխառնությունն իջնում և մինչև 4 աստիճան։ Այսուհետեւ, յերբ վերի շերտը սառեւպես պաղում և ավելի, ասենք, մինչև 3 աստիճան, արդեն այդ պաղած շերտը վոչ միայն մնացյալ ջրից ավելի ծանր չի, այլ նույնիսկ թեթև եւ ընդարձակվելու հետևանքով։ Նա այլևս չի ընկղմվում, այլ՝ իբրև ավելի թեթև հեղուկ, ձեթի նման մնում և ջրի յերեսին։ Այսուեղ որեցոր ավելի ևս պաղում ու թեթևանում են, մինչև վոր 0 աստիճանին և հասնում և սկսում և սառչել, պինդ մարմին դառնալ։ Իսկ նրա տակի ջուրը պահում և իր 4 աստիճան բարեխառնությունը։ Զմեռված ընթացքում աստիճանաբար հաստանում և վերի սառած շերտը, իսկ տակի ջուր պահպանում և իրեւ աստիճան բարեխառնությունը։

Ի՞նչ կլիներ, յեթե ջրի ընդարձակման որենքն այդ անկանոնությունը, այդ զարտուղությունը չունենար։ Գետերը, լճերը, ծովերը ձմեռը կատելին ամրողովին մինչև ավազանի հատակը, և նրանց մեջ ապրող կենդանիան և բուսական թագավորությունը վոչ միայն չեղարգանա, այլ ամեն տարի կոչնչանար։

Այդ և պատճառը, վոր յերբ համեմատում են մարտինների ծանրությունն իրար հետ (իհարկե, մինչեւյն ծավալը վերցնելով, կամ մի խորանարդ սանտեմեր, կամ մի խորանարդ դեցիմետր, վոր այլապես մարտ և կոչվում և 1000 խ. սանտիմետր և պարտմա-

կում)՝ իբրև միավոր ընդունում են 4 աստիճանանոց լրի ծանրությունը։ Յեթե ձեզ ասում են, թե յերկաթի անսակարար կշիռը մոտ 8 ե, այդ նշանակում ե, վոք յիթե միենաւույն ծավալով ջուր և յերկաթ վերցնենք, յերկաթը մոտ 8 տոնտամ ծանր կլինի։

Մանրության միավոր դրամը, կամ կիլոգրամը, վոր համառոտորեն կիլո յե կոչվում, նույնպես կապաված և 4 աստիճանանոց ջրի հետ։ Մի լիտը 4 աստիճան ջուրն ուղիղ մի կիլո յե կշռում, իսկ մի խորանարդ սանտիմետր 4 աստիճան ջրի քաշն լնունքած և իորեն ծանրության միավոր, վոր կոչվում և գրամ։ Մի խորանարդ մետր 4 աստիճան ջրի քաշը, վոր 1000 կիլո յե, անվանվում է տոնն։

Այսպես ուրեմն ծանրության միավորները՝ դրամը, կիլոն ու տոննը չիմնված են մաքուր ջրի հատկության վրա։ Յեզ վոչ միայն ծանրության միավորները։

Ի՞նչ միավարով ենք չափում առարկաների չերմության աստիճանը։ Յելսիռուսի, թեոմյուրի աստիճաններով, իսկ Անդիլիայում՝ Ֆարենհայտի աստիճաններով։ Ֆրանք բոլորն ել հիմնված են ջրի հատկության վրա։ Մինչ այսանու կանոն կառնենք դրանցից միայն մեկի՝ գիտության մեջ ընդունված Յելսիռուսի աստիճանների վրա, վորովհետև մնացած յերկուսն ել նույն սիզորունք ունեն։ Անդիլի ջերմաչափի վրա նշանակում են այն կետը, վորոնդ կանու և առնում սնդիկի այսուհայի ծայրը, յերբ չերմաշափից դնում են հալող ծյանի մեջ, այդ կետը նշանակում են զերոյով։ Ապա ջերմաչափը կախում են յեռացող ջրի գուրութիների մեջ (ծովի մակերեսի բարձրության վրա գտնվող կետում)։ Սնդիկի այսուհայի բարձրանում և մինչև մի վորոշ կետ, վորից զենն այլևս չի բարձրանում, վորքան ժամանակ ել ջերմաչափը պահելու լինենք յեռացող ջրի գոլորշիմերում։ Այդ կետը նշանակում են 100 թվով։ Յերկու նշանակած կետերի միջի տարածությունը բաժանում են 100 հավասար մասի, վորոնցից ամեն մեկը Ցելսիուսի մեկ աստիճանն է։

Կանդ առնենք մի ուրիշ Փիզիկական միավորի վրա, վոր նույնպես հիմնած և ջրի հատկության վրա: Դա լիրմության քանակը չափելու միավորն է, վոր կոչվում և «կալորի»: Կա փոքր կալորի և մեծ կալորի: Փոքր կալորին ջերմության այն քանակությունն է, վոր պետք և հաղորդել մի գրամ ջրին՝ նրա ջերմությունը Յելսիուսի մի աստիճան բարձրացնելու համար, իսկ մեծ կալորին՝ մի կիլո ջրին և վերաբերում, հետևապես փոքր կալորիից 1000 անգամ ավելի յէ: Ավելի մեծ միավորը, վոր մեծ կալորիից և 1000 անգամ ավելի յէ, հետևապես վերաբերում և մի տոնն ջուրը իմ աստիճան տաքացնելուն՝ կոչվում և «տերմի»:

Մի ուրիշ Փիզիկական միավոր ել, վոր հիմնված և ջրի հատկության վրա՝ ջերմունակության միավորն է: Ջերմունակությունը և անվանվում ջերմության այն քանակությունը, վոր պետք և հաղորդել տվյալ մարմնին, նրա ջերմությունը Յելսիուսի՝ մի աստիճան բարձրացնելու համար: Ամեն մի նյութ բնորոշվում և իր սեփական ջերմունակությունով: Եւթե տառմ են, թե սնդիկի ջերմունակությունը համասար և 0,033-ի, այդ նշանակում են, թե մի կիլո սնդիկի մի աստիճան տաքացնելու համար բավական են նրան հաղորդել 33 փոքր կալորի, այլապես 1000 փոքր կալորի ջերմությունը տիճան տաքացնելու համար պետք և սպառել մի մեծ կալորի, ալապես 1000 փոքր կալորի ջերմություն: Ողի ջերմունակությունը, յերբ նա գտնվում և սովորական՝ մեկ մթնոլորտ ճնշման տակ, համասար և 0,17 Նշանակում են, մի կիլո տաք ջուրը՝ իր տաքության ամեն մի աստիճանը տալով մի կիլո ողին, մոտ 6 աստիճան կարող և տաքացել այդ ողը: Իսկ մի կիլո ողը մոտ 0,775 խորանարդ մետր տեղ և բռնում: Ուրեմն, յեթե ձեր սենյակի յերկարությունը 5 մետր է, լայնությունը՝ է մետր և բարձրությունը 3 մետր, և զուք ուզում եք նրա ողի ջերմությունը 0 աստիճանից 20 աստիճանի հասցնել, դուք հաշվում եք, վոր ձեր սենյակում $5 \times 4 \times 3$, այսինքն 60 խոր. մետր ող կալորի քաշը հա-

մասար և ՅՅ: 0,775, այսինքն մոտ 78 կիլոյի: Այդ 78 կիլո ողը մի աստիճան տաքացնելու համար զուք նրան պիտի հաղորդենք $0,17 \times 78$, այսինքն 13,3 մեծ կալորի ջերմություն, իսկ 20 աստիճան տաքացնելու համար՝ 266 մեծ կալորի: Ուրեմն, յեթե զուք սենյակը տանեց մի աման, վորի մեջ 3,3 կիլո յեռալու աստիճանի հասցքած ջուր կա, այդ ջուրը 100 աստիճանից 20-ի հասնելով, հետևապես 80 աստիճան կորցնելով, սենյակի ողին կտա 3,3 անգամ 80 կալորի, այսինքն 264 մեծ կալորի ջերմություն, վոր բավական և սենյակի ողը 0-ից 20 աստիճանի հասցնելու համար:

Զրի բարձր ջերմունակության չնորհիվ, վոր հնարավություն և տալիս մեջ 3,3 կիլո (կամ լիտր) ջրով մի բավականին մեծ սենյակ ձևեռը լավ տաքացնելու, ինչպես վոր պարզվեց վերը բերած հաշվից, քաղաքներում սպավում են մեծ չենքեր տաքացնելու նպատակով:

Կենտրոնական ջրային ջեռուցումը հիմնված և ջրի այդ հատկության, այսինքն բարձր ջերմունակության վրա: Մինչև 60-70 աստիճան տաքացքած ջուրը յերկաթե խողովակներով պատեցնում են չենքի զանազան ժամերում, վորտեղ նա տաքացնում և ողը, իսկ ինքը պատում մինչև 20-25 աստիճան: Պազած ջուրը վերադառնում և կաթսան, վորտեղ կրկին տաքանում և առ կրկին վերադառնում չենքի այն մասերը, վոր կարիք ունեն տաքանալու: Շենքի ամեն մի մասում տաք ջրի խողովակի վրա առանձին վենտիլ (ծորակ) կա, վոր հնարավորություն և տալիս ուժեղացնել կամ նվազեցնել տաք ջրի հոսանքը և հետևապես վորոշ բարձրության վրա ստահել չենքի տվյալ մասի (ասենք՝ սենյակի) բարեխառնությունը:

Զրային ջեռուցումը՝ բնակարաններ, հիմնարկներ տաքացնելու ամենակատարյալ ձևերից մեկն և առողջապահության տեսակետից: Նա այն մեծ առավելությունն ունի շաղային ջեռուցումից, վոր չողին մինչև 100 աստիճան և նույնիսկ ավելի տաքացնելով խողավակները, փչացնում և ողը, վորովհետեւ բնակարաննե-

թի ոգի մեջ միշտ ներկա յե որդանական փոշի, վորք չիվելով շողու խողովակներին՝ տարրալուծվում են վշացնելով զինքը ողողող ողը: Սակայն հաճախ տնտեսուկան պատճառներով գերազասում են կենտրոնական վառուցումը կառուցել շողու վրա հիմնվելով, քան թե տողջապահական տեսակետից ավելի հանձնարարելի տաք ջրի վրա, վորովհետեւ վերջինս ավելի թանգ ենստում, քանի վոր ավելի լայն խողովակներ և պահանջում, վոր շատ ավելի թանգ են, քան թե շողային կենտրոնական ջեռուցման համար պահանջվող նեղիկ խողվակները:

Զրի բարձր ջերմությունը շատ մեծ գեր և կատարում յերկրի զանազան մասերի կիման մեղմացնելու գործում, վորին ավելի ևս նպաստում են ջրի գոլորշացման բարձր «գաղտնի ջերմությունը» և սառուցիչ ալյան «գաղտնի ջերմությունը»:

Ի՞նչ և «գաղտնի ջերմություն» կոչվածը: Յեթե մի լրով լիքը կաթսա զնեք կրակի վրա և ջերմաշափով հետեւք ջրի տաքությանը, դուք կնկատեք, վոր ջերմաշափի մնդիկը (կամ ներկված սպիրտը) տատիճանաբար բարձրանում և մինչև 100 աստիճան (Յերևանում՝ 75 աստիճան) և այնուհետև այլևս չի բարձրանում, թեկուզ ժամերով պահեք նրան կրակի վրա:


Ո՞ւր և զնում այնուհետև սպառվող վառելիքի ջերմությունը: Նա միայն գոլորշիացնում և հեղուկ ջուրը և այդ պատճառով կաթսայի ջուրն աստիճանաբար պահանում է: Հաշված ե, վոր մի կիլո արդեն 100 աստիճան տաքացած ջուր գոլորշիացնելու համար սպառվում և մոտ 540 մեծ կալորի ջերմություն, վոր կարծես կորչում է: Սակայն այդ ջերմությունը չի կորչում. յեթե գոլորշին մի ոճապտույտ խողովակով անցնի մի բաժակ սառը ջրի միջով, ինքը կրկին հեղուկ չուր կդառնա, միաժամանակ տաքացնելով բաժակը չուրը: Հետեւապես գոլորշին՝ թեղետ միայն 100 աստիճան և ցույց տալիս, բայց նրա մեջ պահպանված և այն ջերմությունը, վոր մենք սպառել ենք ջուրը գոլոր-

շիացնելիս և վոր նա յետ և դարձնում բաժակի սառն ըրին, թեղետ ինքը չի պաղում, այլ միայն հեղուկանում և, պահպանելով իր 100 աստիճան ջերմությունը: Ահա այդ ջերմությունն անվանվում և «գաղտնի ջերմություն»:

Սակայն ջուրը միայն յեռալիս չի գոլորշիանում: Նա գոլորշիանում և և ավելի մասոր ջերմաստիճաններում, բայց ավելի դանդաղ: Ո՞վ չի իմանում, վոր թաց չորը չորանում և սովորական ջերմաստիճանում, առանց տաքացնելու: Հետեւապես նրա վրա մնացած ջուրը գոլորշիանում և և սովորական բարեխառնությունում: Բաժակի միջի ջուրը, ջրած փողոցն ստիճանաբար ցամաքում են, թեպետ դուք նրանց չեք տաքացնում: Ուրեմն ջուրը գոլորշիանում և բարեխառնության բոլոր աստիճաններում, բայց վոչ միենույն արագությամբ: Գիտականների ճիշտ տեղեկությունները ցույց են տալիս, վոր 0 աստիճանի մի կիլո ջուրը նույն աստիճանի գոլորշի գարձնելու համար սպառվում և 606 մեծ կարուի 50 աստիճանի ջրի համար սպառվում և 571 կարուի, իսկ 100 աստիճանի ջրի համար՝ 534 կառորի:

Այդ և պատճառը, վոր ծովամերձ վայրերի կիրառ ավելի մեզմ և, քան թե նույն աշխարհագրական լայնության և նույն բարձրության վրա գտնվող այն վայրերինը, վորոնք ծովից հեռու յեն: Ամառը, յերբ արեգակը շիկացնում և ծովամերձ վայրի ողը, վերջինն աստիճանաբար տալիս և մոտակա ծոթր տաքությունն աստիճանաբար տալիս և մոտակա ծոթր ջրին, վոր իր բարձր ջերմունակության հետևած չով շատ քիչ և տաքանում: Ընդհակառակը, ձմեռը, յերբ ծովի ջուրն սկսում և պաղել, նրա ամեն մի տոննը մի աստիճան սպաղելիս աշազին ջերմություն և հաղորդում ողին, վոր մեղմում և մերձակա վայրի կեման վելիքի ևս աղղում և ամառը ջրի գոլորշիանալը, գաղտնի վերմություն սպառելով, իսկ ձմեռը, յերբ գոլորշի խտանալով մառախուզ, յեղյամ, ձյուն և զառնում, նրա արտադրած գաղտնի ջերմությունը մեղմում և մոտակա վայրի սառնամանիքը:

203 Հ-1-59



Նույնը աեզր ունի և ջուրը սառուց դառնալիս, կամ օտառուցը հալելիս։ Մենք այսոեղ չենք կարող մահացածանոթներ կանգ առնել այս հարցերի վրա, վոր ֆիզիկայի բնագավառին են վերաբերում։ մեր նպատակի համար բավական ե խմանալ, վոր մի կիլո օտառուցը նույն շերմաստիճանի ջուր գառնալու համար սպառում է 80 կալորի շեմություն, իսկ 0 աստիճանի մի կիլո ջուրը սառչելիս արտադրում ե նույն 80 կալորի շեմությունը։ Հետեւապես, յերբ ամառը դուք մի փոքրիկ կտոր (10 դրամ) սառուց եք զցում 100 դրամ ջրի մեջ, սառուցն այսոեղ հալելով, նրա շերմաստիճանը նվազեցնում է մոտ 8 աստիճան, զարովհետեւ 80×10 համաստը է 8×100 ։

Բնության մեջ չառ մեծ դեր է կատարում ջրի այն հատկությունը, վոր սառուց զառնալիս ջրի ծալալը դժախի կերպով ընդարձակվում է։ Հարյուր ծավալ ջուրը 109 ծավալ սառուց և զառնում։ Յեթի չիշլ լցնեք լոռվ, բերանը լավ խցանեք ու ձմեռ ժամանակ թողնեք ցրտում, վոր սոսի, շիշն անպայման կապայթի ընդարձակվող սառուցի ճնշման տակ։ Նույնիսկ չուզունե ամանը չի դիմանում այդ ուժի ճնշմանը և պայմանական մեջ չառ մեծ դեր է կատարում։

Բնության մեջ աշնան վերջին որերը, կամ ձմռան սկզբում, յերբ գետերները ջուրը սառում ե, իսկ ցերեկ մերը կրկին հայում, ջրի այդ հատկությունը մեծ դործ է կատարում լեռների, ժայռերի աստիճանական քայլայման մեջ։ Յերեկը ջուրը լցնում ե նրանց ճեղքերը, գետերն այդ ջուրը սառելիս խորտակում ե նրանց։ Յեզ քանի վոր այդ կատարվում է միլիոնավոր ասրիների ժիթացքում տարին միքանի տասնյակ անդամ, հետեւ վանքներն ահազին են։

Բացի այդ մեջնայտական աշխատությունից ջուրը լուծում է հողի լուծելի մասերը և տանում է ծովերն ու սվիմանուները։ Այսոեղ հավաքված ջրից արևն անդագար գոլորշիթացնում և մաքուր ջուրը, իսկ միջի լուծված ազերը մնում են ծովամ։ այդ և պատճառը, վոր

ծովերի ջրերն անցած միջոնավոր տարբիների ընթացքում հարստացել ե աղերը և գառնալի յեն զարձել։

Ամելու ջրի աղերի քանակը վորոշ չափեց բարձր չպիտի ինի. մոտավորապես 10 լիոր ջուրը պիտի 3-4 դրամ աղեր պարունակի։

Ավելի աղեր պարունակող ջուրը կոչու ջուր ե համարում։ Ջրի կոշտությունը չափվում է ֆրանսիական գերմանական աստիճաններով, վորոնցից գերմանականը ֆրանսիականի մոտ կեսն ե կազմում, ավելի ճիշահանը ֆրանսիականի մոտ կեսն ե կազմում, ավելի ճիշահանը առանձին կոշտություն ունի, գերմանական սիստեմով նրա կոշտությունը 11,2 յե։ Մեր Յերևանի ջրանցքի ջրի կոշտությունը գերմանական սիստեմով 2,8 կ, վոր կոշտությունը գերմանական 5-ին ե հավասար, հետևապես շատ անհուշ ջուր ե։

Խմելու ջրի համար նշանակություն ունի նրա մեջ լուծված գաղերի քանակը։ Ինչպես հայտնի յե, մինությունը ողի չորս հինգերորդական մասն աղոտ գաղեր, մի հինգերորդականը թթվածինը։ Բացի այդ յերեկու գաղերից ողի մեջ միշտ ներկա յե ածխաթթու դաշտը (10.000 ծավալի մեջ միայն 3 ծավալ) և միքանի չաղվազյուտ գաղեր՝ շատ ավելի չնշին քանակությամբ։

Լավ խմելու ջրի ամեն մի լիտրը պիտի պարունակուի լուծված գրության մեջ մոտ 50 խորանարդ սանտիմետր կազմում է, պար կազմ, վորից 20-ը՝ աղոտ, 20-ը՝ ածխաթթու, մետր կազմ, վորից 10-ը՝ թթվածին։ Ինչպես տեսնում եք, ջրի մեջ լուծված գաղերի փոխադարձ հարաբերությունը հիմնովին տարբեր է մինուլուսի ողի կազմից։ Թթվածինը, վոր մթնոլորտի ողի մի հինգերորդ մասն ե կազմում, ջրի մեջ արդեն 2 հինգերորդ մասն ե։ Այդ հանգամանքը մեջ նշանակություն ունի ջրերի մեջ ապրող կենդանիների համար, վորովհետեւ հնարավորություն ե տալիս նրանց չնշել լին մեջ առատորեն լուծված թթվածնով։ Թթվածնից ջուրի ջրի մեջ ձկները չեն կարող ապրել։ Քարափիրիկի հիվանդությունների ըրջանում վա-

բակվելուց ապահովելու նպատակով ցանկալի յե հում
չուր չխմել, վորովհետեւ խոլերայի, տիֆի, փորուծու-
թյան և մի շարք ուրիշ տարափոխիկ հիվանդություն-
ների մանրեները ջուրը յեռացնելիս վոչչանում են։
Սակայն աչքի առաջ պիտի ունենալ, վոր յեռացրած
ջուրն անվնաս և միայն այն գեղքում, յեթե դործ և ած-
վում չուտով յեռացնելուց հետո, վարովհնուեւ հակա-
ռակ գեղքում, բաց անոթում յերկար ժամանակ պահո-
ված յեռացրած ջուրը կարող են ունիսկ հում ջրից ել
ավելի վառնդավոր լինել։ Բանը նրանումն ե, վոր յե-
ռացնելիս ջուրը զրկվում ե ողից։ յերբ յերկար ժամա-
նակ յեռացրած ջուրը պահում եք բաց անոթում, վոչու-
հետ միասին ողից ընկնում են նրա մեջ զանադան ման-
րեներ, վարոնց մեջ կարող են լինել և վառնդավոր տե-
սակներից։ Ողից զուրկ յեռացրած ջրում կուտակվում
են որդանական նյութեր, վորոնցով սնվում ու զարդա-
ռում են մանրեները, մինչդեռ թթվածնով հարուստ
ջրում այդ որդանական նյութերը՝ թթվածնի հետ միա-
նալով՝ այրվում են։ Հետեւապես յեռացրած ջուրը կա-
րելի յե դործ ածել միայն այն գեղքում, յեթե նրա
յեռացնելուց հետո յերկար ժամանակ չի անցել, նա ժա-
մանակ չի ունեցել հարստանալու որդանական նյութե-
րով և մանրեներով։ Բացի այդ՝ ողից զուրկ ջուրը հա-
մար տեսակետից ել հում ջրից սոսոր ե։ Նա՝ զուրկ լինե-
լով թթվածնից ու ածխաթթվից, զուրկ ե հում ջրի
թարմացնող հատկությունից։

Յերեանի նման փոշոտ քաղաքում հատուկ պրո-
պականդ պետք և մզել ջրի առատ դործածության հառ-
մար։ Շուկայից, նույնիսկ այդիներից տուն բերած
քանջարեղենը, կանաչին, մրգեղինը միշտ ծածկված են
փոշով, վորի մեջ միտում են մանրեները։ Տարափոխիկ
հիվանդությունների շրջանում դրանց մեջ կարող են
պատահել և վտանգավոր մանրեներ։ Հետեւարար ան-
հաժամանակ և վոչ միայն այդ բոլոր սննդեղենն ուտելուց
առաջ լվանալ, այլև ձեռքերն ու բերանը լվանալ։
Կուլտուրական ազգերի մեջ արդեն բնազդ է գարձել ու-

տելուց առաջ ըլվացվելը։ Անհրաժեշտ ե այդ ողիությու-
թյունը պատվաստել և մեր ավատավորության լայն
շրջաններին։ Այդ ողիության և առհասարակ մաք-
րության հետևանքով ե, վոր կուլտուրական ժողո-
վուրդները համարյա աղատ են համաճարակների սար-
սափից։ Բնակչության ամեն մի հոգու սպառած ջրի ու-
սապոնի քանակն աւղիղ համեմատական են նրա կուլտու-
րականության և տիրող առողջապահական պայմանների
բարձրության։

Սակայն բավական չի մեծ քաղաքի բնակչությանը
միայն առատ ջուր մատակարարելը. անհրաժեշտ ե հո-
գալ նաև կեղաստ ջրերի, մարդկային և անսանական
արտաթորությունների՝ քաղաքի սահմաններից հեռաց-
նելու մասին։

Յեթե գյուղերում, շատ վորքը քաղաքներում կարե-
լի յե սայլերով զուրս տանել կեղաստությունները և ա-
ռանձին հող շտանել ջրերի մասին, միջակ և մեծ քո-
ղաքներում չի կարելի բավականանալ այդպիսի միջոց-
ներով, վորովհետեւ քաղաքի ամրոց դետինը տարինե-
րի ընթացքում վարակվում ե։ Դրա դեմ պայքարելու
միակ միջոցը կոյուղիների կառուցումն ե։

Յերեանի հարյուր հազար հոգի աղդաբնակությու-
նը տարեկան մոտ 50.000 տոնն, այսինքն 3 միլիոն
փութ միայն մեզ ու կղկղանք և արտադրում։ Ավելաց-
ըլք գրան լվացքի, խոհանոցների և այլ կեղաստ ջրերը
և զուրք կստանաք անլոնցհատ հոսող մի մեծ առու, կամ
մի փոքրիկ գետակ, վոր այժմ հազարավոր հօրերի մեջ
թափվելով, վարակում ե քաղաքի գետինը։

Յերեանի ապագա կոյուղին պիտի հավաքի և՝ քա-
ղաքից զուրս բերելով բոլոր այդ կեղաստ ջրերը ու ա-
ռատելով մեծակտոր կեղաքի թղթի կտորներից և այլն,
նրանով ջրի բանջարանոցների նախորոք փափկացրած
հողը։ Կեղաստ ջուրը՝ անցնելով փափկացրած հողի
հաստ շերտի միջակ, կթողնի նրա մեջ որդանական նյու-
թերը, վորից հողը կողարարտանա, իսկ հողի միջով ան-
ցած ջուրը կմաքրվի։ Մեր արագործն անող քաղաքի հա-
տելուց կմաքրվի։

ժար կոյուղին արդեն անհրաժեշտություն է: Ամեն մի հեկտար բանջարանոցի հող կարող է ընդունել և մաքրել արքեկան ջանա հազար լիտր, մոտ 1700 գույլ կոյուղու ջար:

Քարեբախտաբար առաջիկա 1932 թվին Յերքաղ-թորհուրդը ձեռնարկում է կոյուղու կառուցման: Անհրաժեշտ է մոտ ապաղայում ինքնինականին եղ կոյուղի առաջ:

ԶԵՒ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԸ

ՅԵՒ ուշադրություն դարձնելու լինենք առարեր աղբյուրներից, գետերից, ծովերից վերցրած ջրերի մենայական խառնուրդների, նրանց մեջ լուծված աղերի, դաշերի ու նրանց մեջ ապրող մանրեների վրա, բոլոր ների քիմիական կազմը նույնն է:

ՅԵՒ ուշադրություն դարձնելու լինենք առարեր նյութերի միացման արդյունք ե՝ ջրածնի և թթվածնի: Ջրածն զաղը, վոր մեզ հայտնի պաղերից ամենաթեթևն է, ողի կամ թթվածնի մթնոլորտում այրվելիս առաջացնում ե ջրի գոլորշի, վոր պաղերով հեղուկ ջուր և դառնում: Հայտնի քիմիկոսների բազմաթիվ փորձներ հաստատել են, վոր ամեն մի դրամ ջրածնին այրվելիս քիանում ե 8 դրամ թթվածնի հետ, փորից առաջանում է 9 դրամ ջուր: ՅԵՒ ծավալով չափելու լինենք զաղերը, կապարզվի, վոր ամեն մի ծավալ թթվածնի հետ մի անում ե 2 ծավալ ջրածնին: Եթե մեր չի լիներ կազմը գիտությանն հատուկ նշանների լեզվով ջուրը արտահայտում են յերկու լատինական տառերով, վարոնցից առաջինը՝ H լատինական հիդրոզեն խոսքի, վոր նշանակում է ջրածնին, առաջին տառն է, իսկ յերկորդը՝ O - լատինական օքսիգեն խոսքի, վոր թթվածնին է նշանակում՝ առաջին տառն է:

Ա առի կողքին դնում են 2 թթվանշանը, վոր ցույց ե տուիր, թե այդ նյութը կաղմված է 2 ծավալ ջրա-

ծնից, մի ծավալ թթվածնի հետ: Հետևապես 20-ր կը բ քիմիական արտահայտությունը, կամ Փորմուլին է:

Զրի վերոհիշյալ 2 գաղային նյութերից կաղմված մնելու ապացուցված և վոչ միայն նրա գոյացման ունակցիայով, այլև Զրի տարրալուծական ունակցիայով: Առանց կանգ տանելու քիմիական բնագավառին վերաբեր վող մանրամասնությունների վրա, ավելորդ չենք համարում ասել, վոր քիմիական բարդ մարմինների տարրալուծումը կատարվում է յերկու ճանապարհով՝ ելեկտրականության և ջերմության աղդեցությունով: Յեկ բազմաթիվ գիտնականների հաջողվել և տարրալուծելու վորը, վոր նրանք միշտ միևնույն անփոփոխ յելլու կացությանն են հանգել, վոր ջուրը կաղմված և ըստ բաշի՝ մի մաս ջրածնից և ութ մաս թթվածնից, իսկ ըստ ծավալի՝ մի մաս թթվածնից և յերկու մաս ջրածնից, քանի վոր թթվածնը 16 անգամ ջրածնից ծանր է:

Ընթերցողը կարող է հարցնել. ի՞նչպես ե, վոր 2 գաղային նյութերից ստացվում է ըրի նման հեղուկ նյութ: Հայտնի յի, վոր գաղային նյութերի մասնիկների շարժման եներդիման շատ ավելի մեծ է, քան թի հեղուկներինը: Այդու ամեն մի դրամ ջրածնին այրվելիս արտադրում է 34,5 մեծ կալորի ջերմություն, վոր եներդիմայի արտահայտություններից մեկն է. հետևապես ջրածնին ու թթվածնը միանալիս զրկվում են եներդիմայի վրոշ պաշարից, ուրեմն նրանց մասնիկների շարժման մեներդիման նվազում է. հետևապես միացման արդյունք հանդիսացող ջրի մասնիկներն այլևս չեն կարող ունենալ շարժման նախկին եներդիման և պահպանել իրենց գաղային զրությունը:

Յեկ լավագաւակալը՝ յերբ մենք ուսում ենք ջուրը տարրալուծել, այսինքն ջրածնի մասնիկները բաժանել թթվածնի մասնիկներից և գաղային նյութեր ստանալ, վորոնց մասնիկների շարժման եներդիման շատ ավելի բարձր է, քան թի ջրի մասնիկներինը, մենք ստիպված ենք զրսից եներդիման հաղորդել ըրի մասնիկներին, պահ

այդ ելեկտրական, թե ջերմային եներգիա: Ճիշտ դիտու
զություններն ապացուցում են, վոր 9 գրամ ջուրը
տարրածություն համար ապառվում ե նույն 34,5 մէծ
կալորի և ներդիման, վոր առաջանում ե մի գրամ ջրածի-
նը ութ գրամ թթվածնի հետ միանալիս, նույն 9 գրամ
ջուրն ստանալու համար:

Ենվ վորովհետև մի գրամ ածխածինն այրվելիս
միայն 8 կալորի ջերմություն ե առաջացնում, պարզ ե,
վոր այն վառելքն ե ավելի ջերմություն առաջացնում,
վորի մէջ ջրածնի տոկոսն ավելի յէ. իհարկէ, այն ջրա-
ծինը, վոր վառելքի մէջ ներկա յէ իրբե խոնավու-
թյուն, իրբե ջուր, վոչ միայն անողուտ ե, այլ նույն
իսկ վնասակար ե, վորովհետև վառելքն այրելիս
չուրը գոլորշիանում ե, անողուտ կերպով վառելքը
սպառելով (վերը հիշած՝ գոլորշիացման գաղտնի ջեր-
մություն): Այդպէս՝ նավթի մի կիլոն ավելի ջերմու-
թյուն ե արտադրում, քան թե ամենալավ անտրացիսի,
կամ կոքսի մի կիլոն, վորովհետև նավթը մոտ 14 տո-
կոս ջրածին ե պարունակում, մինչդեռ անտրացիոր,
մանավանդ կոքսը՝ ավելի պակաս:

Զրի մէջ լուծվում են բաղմաթիվ անորդանական պ-
որդանական նյութեր, փարոնցից ամեն մեկը լուծվում
և մինչև ջրի հագեցումը, վոր տարրեր ե զանազան ջերմ-
աստիճանների համար: Առհասարակ աղերը և պինդ
նյութերն ավելի շատ են լուծվում բարձր ջերմաստի-
ճաններում, իսկ գաղային մարմինները՝ ընդհակառա-
կը, ավելի ստոր ջերմաստիճաններում: Կան զրի հետ
այն աստիճանի աղահությամբ միացող նյութեր, վոր
միանում են նույնիսկ մթնոլորտի մէջ գտնված զրի գո-
լորշինների հետ: Այդպէսի նյութերի թվին են պատկա-
նում չհանդցրած կիրը, աղը: Ավելի աղահությամբ են
միանում ողի միջի ջրային գոլորշինների հետ ծծմբական
թթուն, քորական կիրը և ելի միքանի ուրիշ նյութեր,
վորոնցով ողտվում են սահմանափակ տարածություննե-
րի ողը չորացնելու նպատակով: Արևնակ, յեթե պա-
տուհանի շրջանակները կրկնակի ին, ձմեռը նրանց պ-

բանքում գնում են մի բաժանէ, վորի մեջ մի քիչ թունել
ծծմբաթթու յև ածում: Զմեռվա ընթացքում ծծմբա-
թթուն անդադար չորացնելով յերկու ըրջանակների ա-
թանքի ողը, լցնում ե ամրող բաժանէ. այդ պատճա-
րանքի ողը, լցնում ե բարձր բաժակով ողտվել, վոր ծծմբաթթ-
ուով զետք ե բարձր բաժակով ողտվել, վոր ծծմբաթթ-
թուն բաժակը լցնելուց հետո չթափնի ու չփչացնի
ըրջանակի ստորին մասում:

Ծառ նյութեր բյուրեղանում են զրի վորոշ քանակի
հետ միացած. որինակ՝ գաճի քարի բյուրեղները միշտ
միացած են զրի հետ և գաճ այրելու իմաստը հենց նրա-
միացած մասից մասից աղասիկնելով՝ գա-
նումն ե, վոր այդ զրի վորոշ մասից աղասիկնելով՝ գա-
ճաքարը գաճ դառնա: Գաճաքարը, այսինքն չայրփած
գաճը մոտ 21 % զուր և պարունակում, իսկ այրփած
գաճը՝ միայն 6,2 %: Զհանդցրած կիրը ջուր չուրի իր
մէջ, իսկ հանդցրած կիրի մէջ 24 տոկոսից ավելի ջուր
մէջ, իսկ հանդցրած կիրի մէջ 24 տոկոսից ավելի ջուր
կա, վոր այն աստիճան ե միացած կիրի հետ, վոր վոչ
միայն 100 աստիճանում, այլ նույնիսկ 500 աստիճա-
նում ել չի գոլորշիանում:

ԶՈՒՐՆ ԻԲՐԵՎ ՄԵՐԵՆ ԱՅԱԿԱՆ ԵՆԵՐԳԻԱՅԻ ԱՐԲՅՈՒԹ

Ամեն մի նյութ, վոր կարող ե բարձրից ընկնել
յերկրի մակերեսի վրա, կարող ե ծառայել իրեւ մեքե-
նայական ներդիմայի աղբյուր: Ո՞վ չի տեսէ ծանրու-
թյուններով աշխատող պատի ժամացույց: Նրան աշ-
խատեցնողն այն ծանրությունն ե, վոր պարբերաբար
ձեռքով բարձրացնում են, հանդավորություն տալով
ժամանակի ընթացքում աստիճանաբար իշնելով՝ ժա-
մանականի աշխատեցնել: Այդ տեսակետից վոչ մի նյութ
աշխատեցնել: Այդ տեսակետից վոչ մի նյութ
չնձեռնում այն հարակությունները, ինչ վոր բն-
ձեռնում ե կերպից ներքե թափվող կամ հոսող ջուրը:
Ջորի աշխատող ջրաղացները վաղուց են հայտնի մարդ-
կության, սակայն զրի մեքենայական ուժն ելեկտրա-
կության, սակայն զրի մեքենայական ուժն ելեկտրա-
կության վերածելու և հեռավոր տեղեր փոխադրելու
կանության վերածելու և հեռավոր տեղեր փոխադրելու

Միության մեջ այդ գործն սկսել է զարդանալ խորհրդային իրավակարգությամբ:

1926 թվի վերջին ամբողջ աշխարհում հաշվառված րոլոր Հրա-ելեկտրակայանները մատակարարում ենին մարդկության 33 միլիոն ձիռ ուժ, այսինքն ունեցին 25 միլիոն կիլովատ կարողություն: Դրանցից մոտ 17 միլիոն ձիռ ուժ Ամերիկայում, մոտ 13 միլիոն՝ Յեվրոպայում և միայն 3 միլիոն՝ աշխարհի մյուս մասերում:

Սեր Միության ամենամեծ ջրա-երեկորակայանը Վոլխովին և, 75 հազար ձիռ ուժի և Զեմո-Ավչալինը (Թիֆիսի մոտ) 16-30 հազար ձիռ ուժի: Երեսնի առաջին Հրա-ելեկտրակայանը մոտ 7000 ձիռ ուժ ունի, իսկ յերկրորդը՝ 3200: Լենինականի ջրա-կայանը՝ 7600 ձիռ ուժ, կառուցվող ջորագեսը՝ 30 հազար ձիռ ուժ և Քանաքեազենը՝ 57 հազար ձիռ ուժ:

Ջրա-ելեկտրակայանների կարողությունն առևտուական ընդունված և արտահայտել կիլովատներով: 4 ձիռ ուժը մոտ 3 կիլովատ է:

Անհն մի կայանի կարողություն կախված է յերկու պայմանից. ա) քանի խորանարդ մետր ջուր և ստանում տվյալ կայանն ամեն մի վայրկյանում և բ) ինչ բարձրությունից և զահավիժում կամ թափվում այդ ջուրը: Կայանի կարողությունն ուղղի համեմատական և այդ 2 մեծությունների արտադրության և ջրի ուժն ողտադրող մեքենայի կատարելության, վոր ճարտարագետներն անվանում են «ողտադրման գործակից»:

Վերը բերած թվերից յերեսում ե, վոր խորհրդային իշխանության որոր Հայաստանը հարաստել է մոտ 20 հազար ջրային ուժով աշխատող ձիերով, շատ չուտով այդ՝ զարի ու խոտ չպահանջող ձիերի թիվը Խ. Հայաստանում պիտի 100 հազարից անցնի, իսկ չորրորդ հեղամյակի վերջում ծրագրվում ե 4 միլիոնի հասցնել (1942 թվին):

Ելեկտրական եներգիան, բացի մեքենայական աշխատանք կատարելուց, մեծ դոր և կատարում նույնպես քիմիայի բնադրավառությամբ: Ընկ վորովհետեւ զիմե-

ական արդյունաբերությունը կարող է բնականոն կերպով վարդանալ միայն այն յերկրներում, ուր վոր ելեկտրոններդիքան եժան է, իսկ այդպես են լեռնայ յերկրները, ուր վոր ջուրը լեռների բարձրունքներից վազում և հարթավայրերը, և առաջակա մեր Խորհրդային Հայաստանն այդպիսի յերկրներից մեկն է: Հրազդան (Զանգու) գետը, որինակ, սկիզբ է առնում Աևանա լճակից, վոր մոտ 1000 մետր բարձր և Յերեան քաղաքից: Այդ հանգամանքը հնարավորություն է տալիս ոդտագործելու գետի այդ անազին անկումը:

Հասակակա մեծ քանակությամբ ելեկտրական եներգիա յետ սպառում պարարտանյութերի արտադրությունը: այդ պատճառը, վոր մի այդպիսի գործարան արգեն կառուցվում է ի: Հայաստանում (Հարավիլսայի ազուային պարարտանյութերի զործարանը), մյուսն ել նախագծվում է (սուակերֆոռֆասի): Մեծ քանակությամբ եներգիա յետ սպառում նույնական իսրարթի արտադրությունը: Այդ պատճառով Միութենական կենարունի կարգագրությամբ մեր Յերեանի կարբուդի գործարանի կարողությունը 1932 թվին պիտի յաթնազատմիլի՝ վաշ միայն Անդրկովկասի պահանջի չափով, այդ Միության մյուս մասերին ել կարենք մատկարարելու նպատակով:

Ենի այդ բոլորը զիմ եներգիայի չորհիվ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0269320

12061

ԳՐԱ 10 ԿՈՒ. (1 Վ.)

Եղիշեական
Կուրսական



Инж. М. АНДРЕАСЯН
ВОДА И ЕЕ СВОЙСТВА

Госиздат ССР Армении
Эревань—1992